Բասեան որ գլխնուս կը բաժանեն Անդարէն և Հիւսիսէ Գլիճ կետուկի շղթայն, որ Ալաշկերտի և Անդարի միջավայրն է բարձրացած։

Այս վայրն որ այժմ 100-է առաւել քրդական գիւղեր կան և ոչ մի գիւղ հայ անհատի մի նշան չտեսնուիր մինչդեռ 1760—80 թուականներուն ամբողջովին հայ էին· 1815—20 թուականներուն դեռ ժողովրդեան ½ը հայ էր, 1830 թուականներուն 30 մեծ գիւղեր կային և 1840-ին 5—6 գիւղեր կային, որք այժմ չկան։

Ծաղկոտն գաւառի վիճակին ենթարկուած է Տուաբածատափ· Արածանոյ երկու ափերու վերայ, իրարու հանդէփ գրեթէ մեծութեամբ իրարու հաւասար՝ երկուքն ևս զրկուած են հայ բնակիչներէ· երկուքն ևս ունին ամենակարևոր հայկական հնութիւններ, եկեղեցիներ, վանքեր և բերդօրայք, դեռ կանգուն կան քանի վանքեր, որք զտեսողս կը հիացնեն։

Արածանւոյ աջ ափի վերայ 12 ժամ ի հարաւ տարածուած է Անդաբ և նոյնչափ մի ևս յարևմուտս բարձրացած մի անհարթ երկիր է և թերևս այս անհարթութեան պատճառաւ այս օր Անդաբ կամ Անտափ կը կոչուի, որ կը նշանակէ անտափարակ։

Ս. Գէորգայ տօնին Գլիճ—կէտուկի գագաթներէն միոյն վերայ բարձրացած եմ և դիտած և ուշի ուշով ուշադրութեան առած՝ նաև քանիցս Անդրու վիճակին լաւ ծանօթ անձինքներէ քաղած եմ հետևեալ ճշգրիտ և համառօտ տեղեկութիւններն, զոր Ծաղկոտն գաւառի նման մերկ և անուանց ցանկ մի միայն կը ներկայացնեմ սակաւ ինչ ծանօթութեամբ։

Այս գիւղերու անուանք ևս հետաքրքրութենէ զուրկ չեն, ունին իւրեանց հայկական նշանակութիւնը։